

նման են, եւ անշուշտ անօթներն ալ տարբեր իրարմէ: Յուդա իւր ձեռն Յիսուսի հետ «միւսաց ի սկաւառակն» (Մտթ. ԻԶ, 23). ուրեմն հասարակաց ուտելի եւ ըստ իս պնակէն մեծ էր այն: Դարձեալ ըստ Յովհաննու՝ Յիսուս ինքնին «բացեալ զպատան» կու տայ մատնչին (ժԳ, 26). ուրեմն սկաւառակին մէջ ջրախառն կերակուր մը կար, որով խոր ալ էր: Այս վերջին պարագայիս եւ ընդհանուր ձեւին համար, զոր Շիրակացին կը սահմանէ «բորրակ եւ խոր» (Աւգ. 28), դիտելի է՝ որ նմանութեամբ նոյնպէս կը կոչուէր մարդկային գանկին վերին գմբեթաձեւ մասն ալ. «գսկառառակն գլխոյն» (Փաւս. 233), կամ «յոսկերէ սկառառակին» (Խոր. 173): Իսկ նիւթը զանազան էր. Բիւզանդացիք ունէին մինչեւ անգամ «սկառառակս ոսկիս» (Ռսկ. Թղթ. Ա, 603):

Այստե: Ծագած է յն. ἀψίς բառէն, որ կը նշանակէր զոգացեալ իրեր, ինչպէս գմբէթ, լուացման կոնք (Գար. Ա, 11-2), բոլորակ պնակ (Աղեքս.) եւ այլն: Գործածուած է Փիլոնի թարգմանչէն (Ճոք. 19), նշանակութեամբ իւրմէ հեռի բառի մը դէմ, ῥυτός, որ կոնաձեւ ըմպանակ մ'էր՝ լայնութիւնը դէպ ի վեր (Շենկլ): Բայց աւելի հին կտակարանին մէջ՝ իբրեւ Տա-